

**ՕՍՄԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ
ՀԱՅԵՐԻ ՀՈՂԱԶՐԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1910-1914 թթ.**

Բանալի բառեր – Արևմտյան Հայաստան, Գիլիկիա, Ադանայի նահանգ, օսմանյան իշխանություններ, երիտթուրքական կառավարություն, հողագրկման քաղաքականություն, հողերի բռնագրավում

XIX դարի վերջից մինչև Առաջին աշխարհամարտն Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կարծես գործում էր հետևյալ մոտեցումը՝ խիստ վերահսկվում, սակայն առանձնապես չէր խոչընդոտվում նրանց գործունեությունը մշակութային, կրթական և տնտեսական ասպարեզներում: XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայերի տնտեսական հաջողությունները առավել ակնառու էին. հայ տնտեսավարողները մրցում էին ինչպես օսմանահպատակ մյուս ժողովուրդների, այնպես էլ կայսրություն ներթափանցած եվրոպական կապիտալի հետ: Այդ մրցակցությունից դուրս էր մնում միայն նոր ձևավորվող թուրք բուրժուազիան, որի կայացման համար դիմում էին ամեն կարգի անօրինական միջոցների՝ առավելություններ հարկային դաշտում, մենաշնորհների տրամադրում, օսմանահպատակ քիստոնյաների ունեցվածքի անպատիժ բռնագրավում և հատկապես ջարդերի կազմակերպում: Վերջինս նրանց ունեզրկելու ամենաարդյունավետ ձևն էր: Դա փաստում են 1909 թ. Ադանայի կոտորածները, երբ կարճ ժամանակահատվածում ոչնչացվում և յուրացվում է հայապատկան մեծ կապիտալ:

XIX դարավերջից Օսմանյան կայսրությունում հայերի հողագրկման գործընթացը կամ հայապատկան հողերի բռնագրավումը ստանում է համակարգված ու հետևողական բնույթ: Եթե փորձենք քարտեզագրել կայսրությունում հայերից բռնագրավված հողատարածքները, ապա աներկբայորեն ակնառու է դառնում, որ այն տարեցտարի ավելի մեծ չափերի է հասնում:

Հայապատկան հողերի բռնագրավումները փաստելու և հարցին հնարավոր լուծում տալու համար 1909 թ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը ստեղծում է Հողային հանձնաժողով (Ն. Տաղավարյան, Ղ. Հ. Պեգազյան, Ռ. Փափազյան, Արամ Հալաճյան, Գեղամ Տեր-Կարապետյան), որը պատրաստում է և հրապարակում հայոց ազգապատկան ու անհատական գրավյալ հողերի ու կալվածքների ցուցակներ՝ չորս տեղեկագրի ձևով¹: Ցուցակները

¹ «Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ», Տետր Ա., Պաշտօնական հրատարակությունք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, 1910: «Տեղեկագիր հողային գրամանց յանձ-

ներկայացվում են Կ. Պոլսի Հայոց պատրիարք և Ազգային կենտրոնական վարչության նախագահ Եղիշե արք. Դուրյանին և Պատկառելի քաղաքական ժողովին՝ հստակ նշումով, որ դրանք ամբողջական չեն և ունեն շարունակական համալրման կարիք:

Բռնագրավումների մասին համապարփակ տեղեկություններ է հաղորդում նաև ժամանակի մամուլը, որտեղ գրեթե ամեն օր հրապարակվում են քննարկումներ, վերլուծություններ, բերվում են հողային գրավումների բազմաթիվ փաստեր, տրվում՝ գրավումներ իրականացնելու ձևերն ու եղանակները: 1910 թ. «Ժամանակ» օրաթերթը ահազանգում է, որ Կ. Պոլսում կենտրոնական կառավարության աչքի առջև պաշտոնապես «ազգային ու կրօնական հաստատութեանց» սեփական կալվածքներն են գրավվում, իսկ գավառներում անհատների կողմից հողեր են հափշտակվում. «Հայոց սեփական հողերու հարցը այս պահուս ազգային խնդիրներու օրակարգին մեջ առաջին տեղը կը գրաւէ, կամ պետք է որ գրաւէ»¹:

Համակարգված հողագրկումների մասին բարձրաձայնում էին ազգային բոլոր կառույցները, հասարակական ու կուսակցական գործիչները, օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորները, մտավորականները: Գ. Զոհրապը վարչապետ Սաիդ փաշային գրում է, որ Բարձր դռան գործողությունների ու որոշումների մեջ բազմաթիվ փաստեր կան, որ մատնում են հայերին տնտեսապես ոչնչացնելու քաղաքականությունը: Այդ քաղաքականության առաջին փաստը, թերևս, կալվածագիր ունեցող և տուրքեր վճարող հայերին իրենց հողերի սեփականատեր չճանաչելն է²: Խորհրդարանի մեկ այլ պատգամավոր, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի ստեղծած հողային հանձնաժողովի անդամ Գեղամ Տեր-Կարապետյանը, հողային բռնագրավումների ծագման պատճառները և խնդիրը քննելով, արձանագրում է, որ «նախ պիտի սկսինք հայկական հողային թալանէն, որ մեզի համար ամէնէն կենսական խնդիրներէն մէկը կը կազմէ, և որուն անմիջական կերպով կապուած են հայ երկրագործութիւնը ու պետական շահը»³:

1910-ական թթ. հողային հանձնաժողովներ է ստեղծում նաև երիտթուրքական կառավարությունը: Թէև երիտթուրքերը հանձնարարում էին քննել

նաժողովոյ», Տետր Բ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, 1911; «Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ», Տետր Գ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, 1912; «Տեղեկագիր հողային գրամանց յանձնաժողովոյ», Տետր Դ., Պաշտօնական հրատարակութիւնք Ազգային Պատրիարքարանի, Կ. Պոլիս, 1912:

¹ Գալիաքճեան Ա., Հողային խնդրոյն առթիւ, Տեսութիւն մը Թուրքիոյ կալուածական օրէնքներուն վրայ // «Ժամանակ», Կ. Պոլիս, 1910, թիւ 531, 8-21 Յուլիս, էջ 1:

² Գ. Զօհրապի յիշատակագիրը ուղղուած Վարչապետ Սաիտ փաշայի // «Ազատամարտ», Կ. Պոլիս, 1911, թիւ 776, դեկտեմբեր 21-3 յունուար, էջ 1:

³ Տեր-Կարապետեան Գ., Հողային հարցը հայաբնակ նահանգներու մեջ, Կ. Պոլիս, 1910, էջ 3:

հայերից բռնագրավված հողերի հարցերը, սակայն միաժամանակ խոչընդոտում էին հանձնաժողովների աշխատանքները, դիմում տարբեր խարդախությունների կամ կարևորություն չտալով ցրում դրանք¹:

Ադանայի նահանգի բնակչության մեծ մասը զբաղված էր գյուղատնտեսությամբ: Գյուղացիական տնտեսություններին պատկանող հողերի կողքին արդեն ձգվում էին մասնավոր սեփականատերերի լայնածավալ ագարակները (չիֆթլիքները)²: XIX դարի վերջից կառավարության հետևողական քաղաքականության հետևանքով Կիլիկիայի հայկական հողատարածքների կողքին առաջանում էին թուրքական գյուղեր ու ագարակներ՝ տարածաշրջանը դարձնելով սակավահող մի վայր, որտեղ հողի գինը³ աճելով դառնում է ամենաբարձր կայսրության այլ վայրերի համեմատությամբ⁴:

1909 թ. Ադանայի կոտորածների հետևանքով ևս տեղի է ունենում մեծածավալ հողագրկում: Շատ հողեր մնում են առանց տերերի, վերապրածների մի մասը, կորցնելով գույքն ու ունեցվածքը, հեռանում է, որոշ հողեր օտարվում են հայերից անմշակ մնալու պատճառով: Այրված գույքի հետ ոչնչանում են նաև սեփականատերերի փաստաթղթերը, ուստի վերապրածների որոշ մասը իր իրավունքները հաստատելու խնդրի առջև է կանգնում:

Ադանայի ջարդից հետո նոր նահանգապետ Ջեմալ բեյի հրամանով Ադանա քաղաքի նոր քարտեզ (նախագիծ) է կազմվում, ըստ որի ջարդի ընթացքում հրկիզված տների հաշվին ընդարձակվում էին փողոցները, որի հետևանքով հայկական շատ տներ, նույնիսկ եկեղեցին նոր նախագծից դուրս են մնում: Հատկանշական է նաև, որ այդ աշխատանքն իրականացնող թուրք քարտեզագիր երկրաչափը նույն մարդն էր, որը կոտորածների օրերին «քարիւղ թափելով» հրկիզում էր շենքերը⁵: Ականատեսի վկայությամբ՝ նահանգապետը շատ հետևողական էր վերոնշյալ նախագծի իրականացման հարցում և ոչ մի շեղում թույլ չէր տալիս, անգամ հաշվի չէին առնվում օտարված տարածքների սեփականատերերի իրավունքները, և քանդվում էին նրանց շենքերը⁶:

Հայկական կողմը իր հերթին ևս հետևում էր նոր փողոցների կառուցման աշխատանքներին, տարբեր միջնորդություններով և հիմնավորումներ

¹ Տե՛ս **Համբարյան Ա. Ս.**, Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում (1908-1914), Երևան, 1979, էջ 52-53:

² Տե՛ս **Միմունյան Հ.**, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Երևան, 2009, էջ 24:

³ XIX դարի երկրորդ կեսից հողի գինը անընդմեջ աճելով, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրերին բարձրացել էր տասն անգամ: Տե՛ս **Инджикян О. Г.**, Буржуазия Османской империи, Ереван, 1977, с. 72):

⁴ Տե՛ս **Ermino**, Ադանայի ջարդերը // «Հորիզոն», Թիֆլիս, 1910, թիւ 33, փետրվարի 12, էջ 2:

⁵ Տե՛ս **Լազգաշեան Ա.**, Յիշատակներ դրուագներ կեանքիս պատմութենէն, Նիւ Եորք, 1931, էջ 73:

⁶ Տե՛ս նույն տեղում:

րով փորձում էր փրկել հայապատկան կալվածքները օտարումից: Ադանայի Քաղաքական ժողովի 1910 թ. հունվարի 22-ի նիստի արձանագրություններից տեղեկանում ենք, որ ժողովը որոշում է «անձամբ աչքե անցնել կիրակի օրը բոլոր նոր բացուելիք ճատտէները և փողոցները»¹:

Ահմեթ Ջեմալի հրամանով քանդում էին ոչ միայն Ադանայի, այլ ամբողջ նահանգի շենք-շինությունները: Օրինակներից մեկը Հասանբեյլիի կիսակառույց եկեղեցին է: Ավելի ուշ «Ժամանակի» հետ հարցազրույցում Ջեմալ բեյը նշում էր, որ ինքը ոչ միայն Ադանայի նահանգապետն է, այլև զինվորական հրամանատարը, ուստի եկեղեցու տեղն անհարմար էր ռազմական տեսանկյունից, և բացի այդ՝ շենքի՝ եկեղեցի լինելու հանգամանքը իր համար անորոշ էր, որովհետև իր քանդածը ընդամենը չորս պատ էր: Հարցին, թե ցանկացած հասարակ մահկանացու կարող է տարբերել թեկուզ առանց տանիքի եկեղեցու համար կանգնեցված չորս պատը սովորական շինությունից, և որ հասանբեյլիցիները 1.500 ոսկի էին ծախսել եկեղեցու շինարարության համար, Ահմեթ Ջեմալը պատասխանում է, այդ գյուղական վայրերում շինությունները շատ հասարակ են, որ նման աղետից հետո (ի նկատի ունենալով 1909 թ. ջարդը և ունեզրկումը) դժվար թե գյուղացիները այդպիսի գումար ունենային. «Եթե ամբողջ Հասան Պէյլին ծախել պէտք ըլլայ, 1500 ոսկի չի բռներ»²:

Հարկ է նշել, որ Ադանայի Հայոց թեմի առաջնորդը խնդրել էր Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին Հասանբեյլիի եկեղեցու համար դիմում ուղղել կառավարությանը³: Եկեղեցին չքանդելու հրամանով Բ. Դուռը և Արդարադատության նախարարությունը կրկնակի հեռագրեր են ուղղում Ադանայի կուսակալություն: Ջեմալ բեյը առարկում է՝ ասելով. «Միակ հեռագիր մը ստացայ դատական նախարարութենէն, երբ արդէն շենքը փլած էր», և եզրափակում, որ եթե հայերն օրինական ձևակերպումներով կրկին սկսեն նոր եկեղեցու շինարարություն, ինքը աջակցություն կցուցաբերի, իսկ տվյալ դեպքում կատարել է նահանգապետի և զինվորականի իր պարտքը⁴: Նման գործելաձևը հաճախ խաղարկվող հնարք էր օսմանյան կենտրոնական և տեղական իշխանությունների միջև, ուշացած հրամաններով «կասեցնում» էին ի վնաս հայերի գործողությունները, երբ դրանք արդեն ավարտված էին: Նրանք շփոթմունքի, ուշացման, թյուրիմացության տպավորություն էին ստեղծում, այնուհետև՝ տուժածներին աջակցություն հայտնում:

¹ Մատենադարան, Ադանայի Քաղաքական ժողովի անմշակ արխիվ, Ատենագրություն Ադանայի Քաղաքական ժողովի, 2 մարտ 1905 թ.-10 ապրիլ 1915 թ., 22 յունվար 1910, թ. 50բ:

² Ատանայի Կուսակալ Ճեմալ Պէյի յայտարարութիւնները Հասան Պէյլիի քանդուած եկեղեցիին առթիւ // «Ժամանակ», 1911, թիւ 758, ապրիլ 1-14, էջ 3:

³ Հայկական լուրեր // «Ժամանակ», 1911, թիւ 851, հուլիս 20-2 օգոստոս, էջ 3:

⁴ Ատանայի Կուսակալ Ճեմալ Պէյի յայտարարութիւնները Հասան Պէյլիի քանդուած եկեղեցիին առթիւ, էջ 3:

Ադանայում Ջեմալ փաշայի կատարած փլուզումների մասին իր հուշերում գրում է նաև բժիշկ Ա. Նազգաշյանը¹. «Ճեմալ Փաշա Ատանայի կուսակալ էր, կամ աւելի շիտակը դիկտատորն էր: Ուզածին պէս կը կտրէր կը թափէր, իր խօսքը օրէնք էր...»²:

Թե՛ շարդից առաջ և թե՛ դրանից հետո Ադանայի նահանգում մուսուլման փախստականների վերաբնակեցումները շարունակվում էին: Ռումելիայից 2.000 փախստականների Ադանայի նահանգում բնակեցնելու մասին շրջանառվող տեղեկությունները կրկին ստիպում են նահանգի բնակիչներին ահազանգել առկա հողային խնդրի մասին: Հայտնի է, որ փախստականները, լքելով պետության կողմից իրենց համար սահմանված տարածքները, բնակություն էին հաստատում արտերի և այգիների շուրջ ու սկսում յուրացնել կամ ոչնչացնել տեղացիների՝ դարերով ձեռք բերած ունեցվածքը³:

Կ. Պոլսի Հայոց պատրիարք Հովհաննես Արշարունին, ըստ Խառը ժողովի որոշման, Ռումելիայից եկած մուսուլման փախստականների վերաբնակեցման հարցով անհանգստություն է հայտնում վարչապետ Մահմուդ Շելվեթ փաշային՝ փաստելով, որ ներքին գավառների ժողովուրդը առանց այդ էլ հողի սակավության խնդիր ունի: Իսկ եթե այնտեղ փախստականներ հաստատվեն, ապա ներքին գավառների բնակիչների համար կարող է ստեղծվել անապահով վիճակ, մանավանդ որ արդեն եղել են նախադեպեր, որոնց մասին վկայում են գավառներից ստացված պաշտոնական նամակները⁴: Վարչապետը առարկում է՝ նշելով, որ նյութական միջոցների սղության պատճառով փախստականներին չեն ուղարկելու ներքին գավառներ, այլ բնակեցնելու են Մարմարայի ափերին՝ պետական դատարկ հողերի վրա, և բացի այդ՝ նրանք խեղճ մարդիկ են և անընդունակ են վրդովելու խաղաղությանը⁵:

1913 թ. սկզբին օսմանյան կառավարությունը փոփոխություն է կատարում Կալվածքների օրենքում, ըստ որի՝ հաստատվում է անշարժ կալվածքների սեփականատիրության իսկական իրավունքը: Ի թիվս այլ առավելությունների՝ նոր օրենքը հնարավորություն էր տալիս նաև կալվածքը ժառանգություն թողնել ազգականներին⁶: 1913 թ. փետրվարի 9/22-ին «Բիւզանդիոնը» գրում է Կալվածքների օրենքի *հրատեղ* (հրամանագիր) վավերացման և խորհրդարանի վավերացումից հետո ուժի մեջ մտնելու

¹ Ա. Նազգաշյանը իր սեփական կալվածքում երկու տուն և ութ խանութ ուներ, որոնք ևս ոչնչացել էին հրդեհից: Տե՛ս **Նազգաշեան Ա.**, նշվ. աշխ., էջ 74:

² Նույն տեղում, էջ 73:

³ Կիլիկեան արձագանք // «Ժամանակ», 1913, թիւ 1389, 7-20 մարտ, էջ 1, 4:

⁴ Հայաստանի եւ Կիլիկիայի անապահովութեան խնդրին մասին պատրիարքին դիմումը // «Ազատամարտ», 1913, թիւ 1168, 21 մարտ-3 ապրիլ, էջ 2:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Կալուածային նոր օրէնքը // «Հեռաձայն», Կ. Պոլիս, 1913, թիւ 18 (1363), փետրուար 9-22, էջ 3:

մասին¹: Թերթի տարբեր համարներում հրատարակված են «Առժամեայ կանոնագիր անշարժ ստացուածքներու»² վերնագրով անշարժ կալվածքների նոր օրենքը հողված առ հողված և «Առժամեայ օրենք անշարժ կալուածները պարտքի փոխարէն գրաւի դնելու մասին»³ օրենքը:

Հատկանշական է Կ. Պոլսի Հայոց պատրիարք Արշարունու՝ անշարժ կալվածքների օրենքի վերաբերյալ շրջաբերականը, որն առաջնորդարաններին էր ուղարկվել Ազգային սեփականություն հանդիսացող կալվածքների արձանագրությունները ճշտելու նպատակով⁴: Կառավարությանը ներկայացվելիք ընդհանուր ցուցակները պետք է կազմված լինեին ամենայն մանրամասնությամբ. յուրաքանչյուր կալվածքի դիմաց պետք է նշված լիներ սեփականատերը, կալվածքի գտնվելու վայրը (գավառը, գավառակը, թաղը, փողոցը, թիվը, արժեքը, ինչպես կամ ինչ անվամբ արձանագրված լինելը), մասնավոր անձանց անունով գրանցված լինելու պարագայում՝ տվյալ անձի ողջ կամ մահացած լինելու հանգամանքը, մահացած լինելու պարագայում՝ ժառանգների առկայությունը, վերջիններիս բնակության վայրը, նույն կալվածքը ազգին փոխանցվելու թվականը և հանգամանքները, ինչպես նաև դրան վերաբերող դատական կամ այլ վեճերի ու ոտնձգությունների վերաբերյալ տեղեկություններ և այլն: Եթե կան այնպիսի կալվածքներ, որոնց փաստաթղթերը կորած են, հարկ է դիմել՝ դրանց պատճենները օրենքի շրջանակներում ստանալու համար⁵:

Ինչպես նկատում են ժամանակակիցները, 1913 թ. փետրվարի 21-ի և մարտի 30-ի հողային նոր օրենքները մեծ փոփոխություններ առաջացրին երկրի կալվածատիրական և հետևաբար տնտեսական դրության մեջ⁶:

Անշարժ կալվածքների օրենքի ընդունումից հետո «Իֆհամ» թերթը իր առաջին իսկ խմբագրականում ընդդիմանում է այս օրենքին՝ այն համարելով թուրք և իսլամ համայնքն ընչազուրկ դարձնելու միջոց : Ըստ պարբերականի՝ երկրում բնակվող «ուրիշ տարրերը» ամեն ջանք գործադրելու են հողերին, կալվածքներին տիրանալու համար, որ այս պարագան չպիտի վրիպի կառավարության ուշադրությունից, և մեծ համարձակություն է փոփոխություններ կատարելը. «Այս երկրին մեջ, Թուրքին, Իսլամին ուժը, կարողու-

¹ Ազգային կալուածները // «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1913, թիւ 4,966, փետրուար 9-22, էջ 2:

² Առժամեայ կանոնագիր անշարժ ստացուածքներու // «Բիւզանդիոն», 1913, թիւ 4,971, փետրուար 15-28; թիւ 4,972, փետրուար 16-1 մարտ; թիւ 4,973, փետրուար 18-3 մարտ; թիւ 4,946, փետրուար 22-7 մարտ; թիւ 4,981, փետրուար 28-3 մարտ:

³ Առժամեայ օրենք անշարժ կալուածները պարտքի փոխարէն գրաւի դնելու մասին // «Բիւզանդիոն», 1913, թիւ 4,984, մարտ 4-12:

⁴ Տե՛ս **Յովհ. Արք. Արշարունի**, Անշարժ կալուածոց օրենքը եւ ազգ. Սեփականութիւնները // «Ժամանակ», 1913, թիւ 1409, մարտ 27-9 ապրիլ, էջ 3:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Տե՛ս **Սուրէնեան Ա. Ա.**, Հողային նոր օրենքներ հրատարակուած փետրուար 21ին եւ մարտ 30ին // «Ժամանակ», 1913, թիւ 1441, 29 ապրիլ-12 մայիս, էջ 1:

թիւնը և ընկերային դիրքը կը հաստատէ: Ակնյայտ է որ նոր օրէնքին հետեւանքը պիտի ըլլայ՝ մեզի համար փճացում, կործանում»¹:

Թէն նոր օրէնքները սեփականատերերին իրենց ունեցվածքը ամրագրելու հնարավորություն են տալիս, ինչն անգամ առաջ է բերում թուրք առաջադեմ հասարակության զայրույթը, այնուամենայնիվ միայն 1913 թ. ոչ լրիվ տվյալներով թուրք կալվածատերերը և քուրդ բեկերը հայերից 30 հազար գյուղացիական հողամաս են խլել²:

1913 թ. «Շամանակ» թերթը հաղորդում է, որ Սիսում հողային գրավումները ևս մեծ չափերի են հասնում: Փաստաբաններից մեկի վկայությամբ այս ժամանակահատվածի դիմումների ու գործերի 70%-ը կապված է հողային հարցերի հետ. «Ժողովուրդը գէշ երազ է մը արթնացածի պէս ինքզինքը յանկարծ կը գտնէ հողէ զրկուելու վտանգին առջեւ»³: Սիսում վերոնշյալ թերթի հատուկ թղթակիցը նշում էր, որ այնտեղ հողային գրավումների առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք հաճախ տեղի են ունենում առանց գէնքի ու բռնության և «էշրաֆ»⁴ անունն են կրում⁵:

1913 թ. դեկտեմբերի 27-ին Ադանայի նահանգից մայրաքաղաք ուղարկված հեռագիրը կրկին հաղորդում է հողային գրավումների մասին: Հեռագրում մասնավորապէս շեշտվում է, որ արդէն տևական ժամանակ է, ինչ Համիդիէ գավառակի հայերի, հույների և օտարների գույքերը, հերկված, նույնիսկ ցանված արտերը հափշտակում են թուրք գյուղացիները: Տեղեկացվում էր, որ կացությունը անտանելի է քրիստոնյա ազարակատերերի համար: Կայմակամությանը և կուսակալությանն ուղղված դիմումները մնում էին անհետևանք, նրանք ոչինչ չէին ձեռնարկում՝ արգելելու կամայականությունները: Հեռագրում նշվում էր նաև, որ նահանգի բնակիչները դիմել են Ներքին գործերի նախարարություն և ակնկալել օգնություն⁶:

1914 թ. ամռանը ևս նահանգի բացառապէս 50 հայ ընտանիքներից բաղկացած Հայ գյուղի վարելահողերը, ռազմական նկատառումներից ելնելով, կրկին վտանգվում են: Գյուղը գտնվում էր Ադանա քաղաքից ոչ շատ հեռու՝ Սիհուն գետի ձախ ափին, իր բնակիչների թվի համեմատ համարվում էր ջարդից առավելապէս տուժածը: Տղամարդկանց մեծամասնությունը կոտորվել էր, իսկ գյուղում մնացած 30-ից ավելի այրիները իրենց ապրուստը

¹ **Գալիագճեան Ա.**, Մեր անշարժ կալուածներուն շուրջ // «Հեռաձայն», Կ. Պոլիս, 1913, թիւ 20 (1365), փետրուար 11-24, էջ 1:

² Տէ ս **Կիրակոսյան Ջ. Ս.**, Առաջին Համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1967, էջ 55:

³ Կիլիկեան արձագանք // «Շամանակ», 1913, թիւ 1514, յուլիս 12-25, էջ 1:

⁴ Թարգմանաբար՝ ազնվական, այստեղ նաև՝ ազդեցիկ, բարձր դիրք զբաղեցնող կամ մեծ լիազորություններ ունեցող իմաստով:

⁵ Կիլիկեան արձագանք // «Շամանակ», 1913, թիւ 1514, յուլիս 12-25, էջ 1:

⁶ Բռնագրաւուած հողեր Ատանայի նահանգին մէջ // «Շամանակ», 1913, թիւ 1674, դեկտեմբեր 28-10 յունուար, էջ 3:

հայթայթում էին հողագործությամբ: Գյուղում մեծ հողատերեր չկային, յուրաքանչյուրը հազիվ 10-20 արտավար¹ հող ուներ: Կառավարությունը որոշել էր գյուղապատկան վարելահողերի ճիշտ կենտրոնում գտնվող 800 քառ. արտավար հողատարածքի վրա գորանոց կառուցել և առաջարկում էր դրա դիմաց վճարել փոխարժեքը: Բնակիչները հասկանում էին, որ գրկվում են ապրուստի հիմնական միջոցից, քանի որ գորանոցի հարևանությամբ բավականին դժվար էր լինելու հողագործությամբ զբաղվելը²: Բացի այդ, առաջարկվող փոխարժեքը ընդունելու դեպքում նրանք կգրկվեն իրենց հողերի նկատմամբ իրավունքից:

Բացի հողային գրավումներից՝ հայ գյուղացու համար լուրջ խնդիր էր նաև իրենց հողատարածքները օտարերկրյա կազմակերպությունների վարձակալության տալու հարկադրանքը: Նման դեպքերում գյուղացիները կրկին գրկվում էին արտերից ու արտավայրերից, կանգնում սովամահ լինելու վտանգի առջև: Նույն խնդրի առջև էին կանգնած նաև Ադանայի նահանգի հայ գյուղացիները, և պատրաստ էին մինչև վերջ դիմագրավելու. «Գիւղացիները միայն բռնի ուժի առջև տեղի պիտի տան, մինչև վերջը ընդդիմանալով Չուքուր-Օվայի ազարակին «Ֆրանսըզ»ներու կողմէ վարձուելուն: Հարց է որ կառավարութիւնը պիտի ուզէ՞ դիմել այդ միջոցին»³:

Օսմանյան կայսրությունում հայերի հողազկման քաղաքականությունը իրականացվում էր բացահայտ, համակարգված ու բիրտ միջոցներով: Հողի իրավունքից գրկումն ազգային բնիկ փոքրամասնությունների նկատմամբ պետության խտրական և անհանդուրժող վերաբերմունքի դրսևորման ձևերից էր: Սկսելով հողազրկումը՝ կենտրոնական կամ տեղական իշխանությունները ստեղծում էին հնարավոր բոլոր արգելքները օրինական ճանապարհով այն հետ բերելու համար: XIX դարավերջից օսմանյան կառավարությունը, Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և կայսրության այլ հայաբնակ վայրերում բռնագրավումների ծավալները շարունակաբար ընդարձակվելով, գործն ավարտին է հասցնում Հայոց ցեղասպանության տարիներին՝ հայերի ամբողջական հողազրկմամբ, այն է՝ հայրենազրկմամբ:

Անի Ոսկանյան – Օսմանյան իշխանությունների կողմից Ադանայի նահանգի հայերի հողազրկման քաղաքականությունը 1910-1914 թթ.

Արևմտյան Հայաստանի նահանգներում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության այլ հայաբնակ վայրերում հայկական հողերը միշտ գտնվել են օսմանյան իշխանությունների թիրախում և XIX դարից ի վեր շարունակաբար հատկացվել են թուրքերին, քրդերին և չերքեզներին: Հողերի բռնագրավումով ոչ միայն բարելավվում էր թուրքերի կամ մյուս մուսուլմանների վիճակը, այլև փոխվում էր երկրի ժո-

¹ Արտաչափ, օրավար, լծվար, լծավար (մեկ օրում վարելիք հողամաս):

² Գաւառական կեանքէն // «Ազատամարտ», 1914, թիւ 1545, 22 յունիս-5 յուլիս, էջ 1:

³ Կիլիկեան արձագանք // «Տամանակ», 1913, թիւ 1520, 18-31 յուլիս, էջ 2:

դովրդագրական պատկերը: Ջրկվելով հողից՝ հայերը հայտնվում էին առավել ծանր սոցիալական վիճակում և ստիպված դիմում արտագաղթի: Դատարկելով հայկական նահանգները՝ օսմանյան կառավարությունը հետապնդում էր մեկ նպատակ՝ ազատվել հայկական տարրից կամ այնպես նվազեցնել հայ բնակչության թիվը, որ որևէ վայրում այն մեծամասնություն չկազմեր: Ազատվելով հայերից՝ օսմանյան իշխանություններն իրենց պետության գոյատևման համար ձեռք էին բերում տարածություն, որը բնակեցված կլիներ մեծամասամբ թուրքերով:

Ани Восканян – Политика конфискации османскими властями земельных владений армян провинции Адана в 1910-1914 гг.

Ключевые слова – Западная Армения, Киликия, провинция Адана, османские власти, младотурецкое правительство, политика конфискации земель, территория, земля

В провинциях Западной Армении, в Киликии и других армянонаселенных регионах Османской империи принадлежащие армянам земли всегда были в центре внимания османских властей. Начиная с XIX века эти земли систематически конфисковывались и передавались туркам, курдам и черкесам. Конфискацией земель не только улучшалось материальное положение турецкого населения и других мусульманских народов, но и менялась демографическая картина региона. Армяне, лишившиеся земельного участка, оказывались в тяжелом социальном положении и вынужденно эмигрировали. Освобождая армянские провинции, османское правительство преследовало одну цель – избавиться от армянского элемента или же настолько сократить численность армянского населения, чтобы оно нигде не составляло большинства. Избавляясь от армян, правительство приобретало главнейший фактор для существования своего государства – территорию, заселенную в большинстве своем турками.

Ani Voskanyan – The Policy of Land Deprivation of the Armenians of Adana Province by the Ottoman Authorities in 1910-1914

Key Words – Western Armenia, Cilicia, Adana Province, Ottoman authorities, Young Turk government, policy of land deprivation, confiscating of lands, space, land

The Armenian-owned lands in Western Armenian provinces, Cilicia and other Armenian-inhabited places were always targeted by the Ottoman authorities, and since the 19th century were gradually allocated to Turks, Kurds and Circassians. The confiscation of the Armenian lands not only improved the situation of Turks or other Muslims, but it also changed the demographic picture of the country. Deprived of their land, the Armenians found themselves in worse social conditions and had to emigrate. By emptying the Armenian provinces, the Government of the ottomans pursued a vital goal, namely to get rid of the Armenian element or to reduce the number of the Armenian population so as they did not form a majority anywhere. Getting rid of the Armenians, the Ottoman authorities gained territory for the survival of their state, which would be predominantly inhabited by Turks.

Անի Ոսկանյան – ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի կրտսեր գիտաշխատող (ani.h.voskanyan@gmail.com)

Ներկայացվել է 22.11.2021

Գրախոսվել է 24.11.2021

Ընդունվել է տպագրության 30.11.2021